

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ**ՔՍԵՆՈՓՈՆՅԱՆ «ՀՆԴԻԼ»-Ի ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՍԵՊԱԳՐԱՅԻՆ ԷԹԻՈՒՆԻՆ**

Չսենոփոնի «Կյուրոպեղիա» երկը թեալետն լիովին արժանահավատ պատմական սկզբնաղբյուր չի համարվում, այսուհանդեռձ որոշ արժեքավոր տեղեկություններ է պարունակում Սովորավոր Ասիայում մ.թ.ա. VII դ. վերջերից մ.թ.ա. VI դ. վերջերն ընդգրկած ժամանակաշրջանում տեղի ունեցած քաղաքական անցութարձի վերաբերյալ: «Կյուրոպեղիա»-ի նկատմամբ դրամուրվող թերահավատության պատճառներից մեկն է եղել է նրանում «Հնդիլ» քաջավորի հիշատակումը՝ որպես ժամանակաշրջանի իրադարձությունների մասնակից:¹ Կարծում ենք, որ «Հնդիլ»-ի և «Հնդկաց» երկրի վերաբերյալ Չսենոփոնի հաղորդումներն իզուր են թերագնահատվել՝ մասնակորապես հայագիտության տեսանկյունից: Բանն այն է, որ դրանցից միայն մեկն է, որ վերաբերում է իրական Հնդկաստանին, ավելի ճշշտ, նրա Սինդ նահանգին՝ Ինդոս գետի ստորին հոսանքի շրջանում:

Չսենոփոնի այդ հաղորդումը Կյուրոսի նվաճումները նկարագրող դրվագից է, որն սկսվում է հետևյալ կերպ. «Նա տիրեց բակտրիացիներին և հնդիկներին և կիլիկեցիներին, ինչպես նաև սակերին և պավիլագոնացիներին և մագդիկներին և բազում այլ ազգերի»:² Իրականում այս հաղորդման մեջ ի նկատի է առնված Չսենոփոնի ժամանակաշրջանի Աքեմենյան աշխարհակալությունը: Հայտնի է, որ մ.թ.ա. Vդ. վերջերի և մ.թ.ա. IVդ. սկիզբների Աքեմենյան աշխարհակալության արևելյան շատ ժողովուրդների ոչ թե Կյուրոսն էր նվաճել, այլ նրա հաջորդները: Դրանց թվում էին նաև իրական հնդիկները՝ Սինդ (պարսկերեն՝ Հինդ) երկրի բնակիչները: «Հնդիլ»-ի («Հնդիլ» քաջավորի), նրա մարդկանց և նրա երկրի վերաբերյալ Չսենոփոնի մյուս հաղորդումները մեր ուշադրությունն ուղղորդում են ոչ թե դեալի Հնդկաստան, այլ Սովորավոր Ասիա:

Ասորեստանի թագավորի հակամարական գործունեության սկիզբը Չսենոփոնը ներկայացնում է այս կերպ. «Ուստի նա սուրհանդակ ուղարկեց իր բոլոր հպատակներին, գոյզ փոյտգացիներին, պավիլագոնացիներին, հնդիկներին, կարիացիներին և կիլիկեցիներին՝ մեղացիների և պարսիկների դեմ զրպարտիչ մեղադրանքներով»:³ Ինչպես տեսնում ենք, «հնդիլ»-ների հետ միասին հիշատակված բոլոր ժողովուրդները բնակիչներն են Սովորավոր Ասիայի: Դրանք Ասորեստանի թագավորին հպատակ Սինդ կատարել և Ասորիքի (լայն առումով) ժողովուրդներն են և բնակիչները Փոքր Ասիայի և

¹ «Կյուրոպեղիա»-ն արևելահայ գրական լեզվով թարգմանած U. Կրլյաշարյանը համամիտ է շատ հայագետների, ովքեր այն համարել են բարոյախտական-քաղաքական վեպ, այդուհանդեռձ նրա հիմքում տեսնում են պատմական հավաստի դեպքեր: Նա ավելացնում է. «Հատկապես Հայկական լեռնաշխարհի բնակիչներին և քաղաքական դեպքերին վերաբերող մասերը հիմնված են պատմական ստույգ տվյալների վրա և միանգամայն արժանահավատ են: Անկասկած, Չսենոփոնը Հայաստանին վերաբերող տեղեկությունները քաղել է 10 հազարի հետ Հայաստանի միջով նահանջելին»: (Չսենոփոն, Կյուրոպեղիա, թարգմանությունը Սիմոն Կրլյաշարյանի, այսուհետև՝ Կյուրոպեղիա, Եր., 2000, էջ 403-404):

² Xenophon, *Cyropaedia* (այսուհետև՝ Xen., Cyr.) with an English transl. by W. Miller, The Loeb Classical Library, vol. I-II, London, 1914, I, I, 4 (Կյուրոպեղիա, էջ 5):

³ Xen., Cyr., I, V, 2 (Կյուրոպեղիա, էջ 35):

արևմտյան Իրանի: Բնականաբար, սրանց շարքում հայտնված «Հնդիկ»-ները ևս, սրանց նման, լինելու էին ոչ թե Հնդկաստանի, այլ Առաջավոր Ասիայի բնակիչներ: Աչքի է զարնում այն հանգամանքը, որ թվարկված երկրների շարքում բացակայում են առաջավորասիական մեկ այլ երկրի՝ Հայկական լեռնաշխարհի բնակիչները, մասնաւունք որ սա այն միակ երկիրն էր, որը անմիջական հարևան էր թե՛ Ասարեաստանի թագավորությունը կազմած Միջազգետքին ու Ասորիքին, թե՛ Փոքր Ասիային ու Իրանին: Ըստ այսմ, հարց է ծագում. արդյոք հենց այստեղ՝ Հայկական լեռնաշխարհում չէի՞ն բնակվում «Կյուրոպեղիա»-ի այս և հաջորդ հաղորդումներում հիշատակված «Հնդիկ»-ները և «Հնդիկ» թագավորը:

Հ.Մանանդյանը, հավատ չընծայելով քսենոփոնյան «Հնդիկ»-ին Հնդկաստանի թագավոր համարող տեսակետին, կարծում էր, որ այն «աղճատված» լընթերցված է: «Ավելի քան հավանական է,- գրում է նա,- որ ՚Ինծո՞-ը պետք է ուղղել և կարդալ ՚Սինծո՞ս, որ նշանակում է սինդ կամ սինդերի թագավոր... Կյուրոպեղիայի վերոհիշյալ հատվածի մեջ հիշատակված են, ըստ իս, ոչ թե հնդիկները, այլ սինդերը, որոնք ինչպես հայտնի է, հենց Կյուրոս Մեծի ժամանակ (550-529 մեր թվ. առաջ) հզոր և հարուստ ժողովորդ էին և ապրում էին այժմյան Անափայի շրջանում»:⁴ Որ «Հնդիկ»-ի թագավորությունը հետու Հնդկաստանում գտնվել չէր կարող, տեղին է նկատել Հ. Մանանդյանը: Բայց այն սինդերի երկրում՝ սևոնյան Անափայի շրջանում ևս գտնվել չէր կարող: Քսենոփոնի հաղորդած տեղեկությունները Հայկական լեռնաշխարհում բնակված խալդայների և «Հնդիկ»-ի փոխհարաբերությունների մասին դա են վկայում: Ըստ Քսենոփոնի՝ խալդայնները «մշտապես կա՞մ կորուստով են գրաղվել, կա՞մ վարձով ծառայել են երթեմն Հնդկաց թագավորի մոտ, որի մասին ասում են, թե շատ ուկիներ ունի, երթեմն նաև Աստյուագեսի մոտ»:⁵ Աստյուագեսը Մարաստանի (Մեղիա) թագավորն էր, բայց իրականում ոչ թե նախորդել է, այլ հաջորդել է Կիարսարեսին:

Խալդայնները Հայկական լեռնաշխարհից սինդերի երկիր հասնելու համար նախ պետք է դուրս գային Սև ծովի հարավարևմտյան ափ, այնուհետև ծովի արևելյան ափով շարունակելով ճանապարհը՝ պետք է անցնեին Կովկասյան զիխավոր լեռնաշրան, նրանից այն կողմ՝ Սև ծովի հյուսիսարևելյան ափին գտնվող Անափայի շրջան մտնելու համար: Դժվար թե խալդայնները նպատակադրվեին սինդերի երկիր գնալ վարձով ծառայելու համար, որովհետև թե՛ այնտեղ հասնելիս, թե՛ այնտեղից վերադառնալիս ստիպված կլինեին անցնելու մի շարք բարբարոս ցեղերի՝ վտանգներով լի երկրներով: Ի նկատի առնենք, որ վարձկաններն ի վերջ նախատեսում էին տուն վերադառնալ, ուստի կնախընտրեին ծառայել մի այնպիսի երկրում, որը մոտ էր իրենց երկրին, իսկ այնտեղ տանող ճանապարհները քաջ հայտնի էին և համեմատաբար անվտանգ:

Խալդայնների և հնդկաց թագավորի փոխհարաբերությունների մասին Քսենոփոնը խոսում է նաև մարական զորավար պարսիկ Կյուրոսի (ապագա Կյուրոս Մեծի) և «Հնդկաց» թագավորի դեսպանների հանդիպման առիթով: «Կյուրոպեղիա»-ի համապատասխան հատվածն է. «Կյուրոսը երբ լսեց, թե խալդայնները հաճախ գնացել են հնդկաց թագավորի մոտ և հիշելով, որ նրա մոտից դեսպաններ են եկել Մեղիա՝ այստեղի իրավիճակին ծանոթանալու համար, որից հետո նրանք մեկնել էին քշնամու (ասունեստանցիների-Ս.Պ.) մոտ, նրանց դրույթանը ևս ծանոթանալու համար, ցանկացավ, որ հնդիկը լսի իր մոտ կատարված դեաքերի մասին»:⁶

⁴ Հ.Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Եր., 1944, էջ 28:

⁵ Խել., Ծր., III, II, 25 (Կյուրոպեղիա, էջ 114):

⁶ Խել., Ծր., III, II, 27 (Կյուրոպեղիա, էջ 114):

Ըստ Քսենոփոնի՝ Ասորեստանի և Մարաստանի միջև ծագած առճակատման առիկ Մարաստանի Կիարսարես արքայի մոտ ժամանած «հնդիկ» պատվիրակները նրան ասում են. «Խնչից սկավեց պատերազմը մեղացիների և ասորեստանցիների միջև։ Քեզ լսելուց հետո, - շարունակեցին նրանք, - արքան («հնդիկ»-ը - Ս.Պ) պատվիրեց մեկնել Ասորեստանի թագավորի մոտ և նոյնը հարցնել նրան։ Վերջում նա մեզ պատվիրեց կողմերին ասել, որ հնդկաց արքան որոշելուց հետո, թե ով է արդարացի, կմիանա անիրավված կողմին։⁷ Իսկ Կյուրոսը, դիմելով «հնդիկ» պատվիրակներին, ասում է. «Հաղորդեք Հնդկաց արքային..., որ եթե Ասորեստանի թագավորը համարում է, որ մենք նրա հանդեպ անարդար ենք, ապա մենք՝ որպես դատավոր, ընտրում ենք հնդկաց արքային։⁸ Այսուղի բերված վկայություններից պարզվում է, որ «հնդիկ»-ը՝ «հնդկաց» թագավորը, իշխել է մի երկրում, որը թագավանին մոտ է գտնվել ոչ միայն Մարաստանին, այլև Ասորեստանին և խալդայների երկրին, իսկ ինքը՝ «Հնդիկ»-ը, եղել է հարուստ (շատ ուշիներ է ունեցել), ունեցել է ուժեղ քանակ՝ բարեկացած ոչ միայն տեղական ուժերից, այլ նաև վարձկան խալդայներից։⁹

Խալդայները բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում, որտեղ նրանց հիշատակն են պահել Շորոխի միջին հոսանքի շրջանի Խաղոսոյ ձոր և Կարին գավառի Խաղոսոյ առիծ տեղանունները։¹⁰ Ընդ որում, խալդայների երկրին մոտ գտնված «Հնդիկ»-ի երկիրը հարևան էր նաև մեղացիների երկրին (Մարաստանին), որովհետև այսուղի այցելելուց հետո էին «Հնդիկ»-ի պատվիրակներն անցել Ասորեստան։¹¹

Ուշագրավ է հետևյալ հանգամանքը ևս. Խալդայները վարձով ծառայում էին ոչ միայն «Հնդիկ»-ի երկրում և Սեղայում (Մարաստան), այլև Արմենիայում՝ նախկին Ուրարտու/Արմենայում։ Եթ «Անարասիս»-ում հունական 10000-անոց զորքի նահանջող նկարագրելիս Քսենոփոնը հաղորդում է, որ Միջազգետից Հայկական լեռնաշխարհ մտած հույնները, երբ հասել էին Կենտրիտես (Արևելյան Տիգրիս) գետին, «Լուսաբացին գետի այն կողմը նրանք նկատեցին սպառազինված հեծյալների, որոնք պատրաստ էին խոշորնութելու գետանցը, իսկ հեծյալներից վերև բլուրների վրա շարվել էին հետևակ զորքեր, որոնք պետք է արգելեին հելլենիստներին Արմենիա դուրս գալ։ Սրանք Օրոնտասի (Երվանդ սատրապի-Ս.Պ) և Արտովիասի արմեններն էին և մարդերն ու խալդայները վարձկան։ Ասում էին, թե խալդայները ազատ են և խիզախ...»։¹²

Եթե խալդայները որպես վարձու զինվոր կարող էին ծառայել ոչ միայն «հնդկաց» երկրում և Մարաստանում, այլև Արմենիայում, որը հունական Բյուրի նահանջի ժամանակ Աքեմենյան աշխարհակալության XIII սատրապությունն էր (Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան կետում)¹³, որեմն, «հնդկաց» երկիրը, Մարաստանի, Արմենիայի և Խալդայների երկրի հետ միասին գտնվել է նոյն տարածաշրջա-

⁷ Նույն տեղում, էջ 86։

⁸ Նույն տեղում, 87։

⁹ Նույն տեղում, III, II, 25; III, II, 27։

¹⁰ **H. Ածոնց**, Արմենիա և էպոխ ՅՈՍՏԻՆԻԱՆԱ, Եր., 1971, սոր. 52, 63; **Ն. Արքոնց**, Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. մ.թ.ա., Եր., 1972, էջ 64-66; **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 55։

¹¹ **Xen.**, Cyr., III, II, 27; VI, II, 9։

¹² **Xenophon**, Anabasis (այսուհետև՝ Xen., Anab.) with an English transl. by L. Carleton, The Loeb Classical Library, Browson, London, 1998, IV, III, 1-4 (Քսենոփոն, Անարասիս, թարգմանությունը U. Կրլյաշարյանի, Եր., 1970, այսուհետև՝ Անարասիս, էջ 88-89):

¹³ **Herodotus**, The Persian wars (այսուհետև՝ Her.) with an English transl. By A.D.Gogley, The Loeb Classical Library, vol. I-IV, London, 1925, III, 94 (Հերոդոտոս, պատմություն ինք զրբից, թարգմանությունը U. Կրլյաշարյանի, այսուհետև՝ Հերոդոտոս, Եր., 1986, էջ 197):

նում և, ամենայն հավանականությամբ, հարեան էր նրանց բոլորին: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ ոչ միայն «հնդիկ»-ի երկրում վարձկանները եղած խալքայները, այլև արմենները զիտեին այնուղղ տանող ճանապարհները:¹⁴ Ուրեմն, այն կարելի է տեղորշել Հայկական լեռնաշխարհի այն մասում, որտեղ գտնվում էր սեպագիր արձանագրությունների երիտնի ցեղամիտությունը: «Հնդիկ»-ի բազավորության այսպիսի տեղորշմամբ է հասկանալի դառնում այնուղղ ոսկու առատությունը, որով հետաքրքրվում էր Կյուրոսը:¹⁵ Ըստ Երևանյին, այդ ոսկին արդյունահանվում էր Սևանա լճից հառավ-արևելք գտնվող Սոտրի ոսկեհանքից: Այն շահագործվում էր շատ վաղ ժամանակներից,¹⁶ իսկ ուրարտական դարաշրջանում իր անոնով Մակա (կարդա Os-kia//«ոսկյա») կոչվում էր համապատասխան լեռնաշղթան:¹⁷

Եթե «հնդիկ»-ի բազավորությունը նախկին երիտնին էր՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան կեսը ներառած XVIII Աքեմենյան սատրապությունը, ապա նրա «հնդիկ»-ները լինելու էին այդ սատրապության բնակչության նեծամասնությունը կազմած սասպեյրները: Սասպեյրների վերաբերյալ Հերոդոտոսի հաղորդած տեղեկություններից առավել ուշագրավ են հետևյալ երկուսը. 1. «Կոլիսիսից Մելիա ավելի չէ ճանապարհը, բայց նրանց միջև բնակվում է մի ազգ՝ սասպեյրները, սրանց միջոցով անցնելուց հետո կարելի է հասնել Մելիա».¹⁸

2. «Պարսկիները բնակվում էին մինչև Հարավային ծովը (Պարսից ծոց - Ս.Պ.), որը կոչվում է Կարմիր: Նրանցից վերև դեպի հյուսիս բնակվում են մեղացիները, մեղացիներից վերև սասպեյրները, սասպեյրներից վերև՝ կոլիսիսը, տարածվելով մինչև հյուսիսային ծովը (Սև ծովը-Ս.Պ.), որտեղ բակվում է Փասիս գետը: Ահա այս չորս ազգերն են բնակվում մեկ ծովից մյուսը»:¹⁹

Գրեք յոթ տասնամյակ առաջ Հ. Սանանյանը ցույց էր տվել, որ սասպեյրների բնակեցրած տարածքը ներառում էր Կողքիսից Սարաստան տանող Զավախը-Աշոցք-Շիրակ- Արարատյան դաշտ-Չարուր-Նախճան ճանապարհը,²⁰ իսկ Ի.Ս.Դյակոնովը սասպեյրներին տեղադրում էր ուրարտական սեպագիր արձանագրությունների Էրիտնի երկրում:²¹ Ավելի քան երեք տասնամյակ առաջ հրատարակած մեր հորվածներից մեկում մենք, համամիտ լինելով հեղինակավոր այս պատմաբաններին, նաև ցույց էինք տվել, որ սասպեյր հնդեւրոպական ծագումով ցեղանունը ոչինչ ընդիանուր չունի այլ սոուզաբանություններ և տեղորշումներ ունեցող Սպեր գավառանվան (ճոռոխի մեծ գետագալարի շրջանի անունն է՝ ծագած հ.-ե. *sper- «զալարել» արմատից) և իրեր ցեղանվան ու Իրերիա երկրանվան (հմնտ. հայերեն Վիրը<*իւր-ը) հետ:²²

Ինչպես հայտնի է հորագործության անցած ցեղախմբերն սկսեցին կրել այնպիսի անվանումներ, որոնք շեշտում էին իրենց տնտեսամշակության տարանջատվա-

¹⁴ Xen., Cyr., III, II, 28; III, II, 29; III, II, 30. «Հնդիկ»-ի, նրա բազավորության և սրա բնակչների մասին Քսէնոփոնը տեղեկություններ կարող էր ստանալ «Հնդիկների երկրի ճանապարհն իմացող» և իրենց մոտ գերի եղած արմեններից՝ ամենայն հավանականությամբ, արմեն գեղազագից և նրա որդուց (Xen., Anab., IV, V, 24; IV, V, 28-30; IV, V, 34-35; IV, VI, 1-3):

¹⁵ Նոյն տեղում, VI, II, 1-3:

¹⁶ «Հայկական սովորական հանրագիտարան», հ. III, Եր., 1977, էջ 697-698:

¹⁷ Ս. Պետրոսյան, Սարդուրի II-ի անդրսևանյան արշավանքի երթուղու շուրջ, Պատմաբանակրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ), 1984, թիվ 2, էջ 178-179:

¹⁸ Her., I, 104 (Հերոդուսու, էջ 46):

¹⁹ Նոյն տեղում, IV, 37 (Հերոդուսու, էջ 234):

²⁰ Հ. Սանանյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, էջ 25:

²¹ Ա. Ճյակոնօ, Պրեծուրության արմանության արմատուրության մասին, էջ 240.

²² Ս. Պետրոսյան, Հացազիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ալվանդագրույցում, ՊԲՀ, 1981, թիվ 3, էջ 193-197:

ծուրյունը շրջակա տարածքների ոչ հողագործ ցեղախմբերից:²³ Այդպիսի պայմաններում է ստեղծվել *սասպեյր* (Σάσπειρες, Σάσπειροι) ցեղանունը, որի հիմքում, մեր կարծիքով, հ.-ե. *sas-per- կամ *sas-p̥uer- նախաձևն է: Սրա առաջին բաղադրիչի համար հնմտ. հին հնդկ. *sasa* «սնունդ, ոտելի բույս», *sasya* «ցանք, սերմ, հացահատիկ, ցորեն», ավելաց. *ha*hyα «հացահատիկ, արմտիք», զալլ. (s)asia «աշորա, հաճար», իսկ երկրորդ բաղադրիչի համար հնմտ. հ.-ե. *per- «օդին, ծնունդ» կամ *p̥uer- «որդի, զարմ» արմատները:²⁴

«Մարդ»/«հացարույս» առասպելաբանական համադրմամ²⁵ հետևանորով հացահատիկի մշակությամբ զրադված հողագործական հանրությունների (տոնիներ, ցեղեր, դասեր, ցեղախմբեր) կրած «հացային» անուններից հիշենք սեպագրային *Aštuhini*-ն և հետագա Աշարունիք//Աշորնիք//Աշորնէք գալառանունը:²⁶ Սրանցից առաջինի աժքաղադրիչը նույնն է *ասսում*//*աշտում* «ցանքաք հաց» բառի արմատի հետ²⁷ (վերջածանցի համար հնմտ. *բրդում*, *պասկում*, *պարկում*), երկրորդի հիմքում *աշարա*//*աշորա* «տարեկան, հաճար» բառն է:²⁸ Ասվածները բույլ են տախս քսենոփոնյան «հնդիկ»-ը համարել վերիիշյալ անունների կազմած իմաստային դաշտի ևս մեկ ներկայացուցիչը, մասնավորապես նոյն իմաստային դաշտին պատկանող *սասպեյր* ցեղանվան հետագա համարժեքը: Մեր կարծիքով, «Ինծ-ի հիմքում հայերն է *ընդիկ-[<]*ունդ-իկ կամ *ընդիկ-[<]*ունդ-ի նախաձևներից մեկն է: Ծագում ու պատկանելություն ցույց տվող -իկ վերջածանցի համար հնմտ. *գունդիկ*, *մարտիկ*, *ռազմիկ* բառերի, հայակազմ *խափշիկ*, *պարսիկ*, *կայսիկ* ցեղանունների, բայց հատկապես հայության տարբեր հատվածներին տրված *գեղմիկ*, *զողիկ*, *վոշիկ* անունները:²⁹ Որ *ընդիկ-ի կողքին կարող էր գոյություն ունենալ *ընդիկ ձևը՝ կազմված -ի (<հ.-ե. *-(i)a/*-(i)o)³⁰ վերջածանցով, ցույց են տախս *գեղմիկ-ի գեղմիկ* և *զողիկ* տարբերակները:³¹ Բացառված չեն նաև *ընդիկ/*ընդիկ-ի *իրնդիկ/*իրնդիկ տարբերակների գոյությունը ևս, որովհետև նրա հիմք *ունդ* «ուտելի սերմ, հատիկ» արմատն ուներ իր *հունդ* տարբերակը: Դժվար է գուշակել, թե Քսենոփոնի հայ տեղեկատուն այդ ձևերից որն է գործածել, բայց հոյն պատմիչի ականջին այն հնչել է իրեն ծանոք «Ինծ-ի /«հնդիկ»-ի նման:

Էթիունի ցեղամիտությունը, ամենայն հավանականությամբ, ունեցել է երկմիասնական կառուցվածք՝ բաղկացած «Չարայի ցեղամիտություն»-ից՝ արևմտսորում և «Գե-

²³ Я. Чеснов, *О социальной мотивированности древних этнонимов*, «Этнонимы», Сб. Института этнографии им. Н.Н.Миклухо-Маклая АН СССР, М., 1970, стр. 48-49.

²⁴ Ս. Պետրոսյան, *Դասերը և եռադասության դրսորումները հին Հայաստանում*, Եր., 2006, էջ 295:

²⁵ Հմմտ. մարդկանց վերաբերող անունդ առնել «սերմը՝ ցեղը ջնջել» բառակապակցությունը (*Հ. Աճաղյան*, *Հայերեն արմատական բառարան*, հ. III, Եր., 1977, էջ 601) և ածու բառը՝ կիրառված ոչ միայն բույսերի համար, այլև «ազգ սակաւաթիւ» (Նոր բառզիրք հայկագեան լեզուի, հ. I, Եր., 1979, էջ 21) և «ազգ» իմաստներով (Մովսիսի Խորենացոյ պատմութիւն հայոց, Եր., 1981, U, q):

²⁶ Ս. Պետրոսյան, *Դասերը և եռադասության դրսորումները հին Հայաստանում*, էջ 281-285:

²⁷ Նոյնը, էջ 285, ծան. 175:

²⁸ Նոյնը, էջ 281-283:

²⁹ Վերջիններիս մասին տես Հ. Մնձուրի, Երկեր, Եր., 1986, էջ 339:

³⁰ Գ. Զահորեան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Եր., 1987, էջ 331:

³¹ «Բառազիրք Հայոց», Քննական բնագիրը, առաջարանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի, Եր., 1975, էջ 64, 67, ծան. 210:

դամի ցեղամիություն»-ից՝ արևելքում:³² Առաջինի բնակիչները եղել են իրենց Հայկազն Շարայից սերած համարող ցեղերը (իմմոտ. «Շարայի ծնունդ»), իսկ երկրորդին՝ նոյնպես Հայկազն Գեղամից իրենց սերած համարող ցեղերը (իմմոտ. «ծովեղերեայսն..., որը ի Գեղամայ»):³³ Ցեղամիության երկու մասերի միասնությունն է արտացոլված նրանց երկուսի համար կիրառված Էտիունի/ի անվան մեջ՝ Etiuni և Ueduri-Etiuni: Ըստ երևոյթին, Երիտնիի երկմիասնական կառուցվածքը նկատի առնելով էր, որ Արարատյան դաշտի ճախափնյակին տիրացած Ուրարտուի Արգիշտի Ի քազավորը (մ.թ.ա. 786-764 թթ.) այստեղ երկու հենակետային ամրոց էր կառուցել: Դրանցից Արգիշտիինիին, գտնվելով արևմուտքում, ուղղված էր բուն Երիտնիի (Երիալսի-Շիրակով) և նրա բնակիչ «Շարայանների» դեմ, իսկ Երերունին, գտնվելով արևելքում, ուղղված էր Վեդուրի-Երիտնիի (Մանակ ավազանով) և նրա բնակիչ «Գեղամյանների» դեմ: Ուշագրավ է, որ Ուրարտուի այս քազավորն իր արձանագրության մեջ հիշատակում է «Դիութինի Իգանեցի թագավոր՝ արքա երկրի Երիտյան» (*'Diušini 'Iganiehi LUGAL KUR Etiuhi'*)³⁴ կոչված մի անձի: Այս տիտղոսից բխում է, որ Երիտնի երկմիասնական ցեղամիության մեջ գրյություն է ունեցել համաէրիտյան քարձր մի պաշտոն, որի կրողը վերադաս է եղել մյուս բոլոր ցեղապետ-արքաների նկատմամբ:

Ի տարրերություն նորոյն գետի ավազանում գտնված իր արևմտյան հարևան Ռիառիկի ցեղամիությանը Երիտնին Ուրարտուի արքաներից կրած ծանր հարվածներից հետո էլ շարունակել էր գրյատել, իսկ Ռուսա I-ի (մ.թ.ա. 735-713 թթ.)՝ կիմերներից և Ասորեստանի թագավոր Սարգոն II-ից կրած պարտություններից, ապա և սկյութների՝ Առաջավոր Ասիայում հայտնվելոց հետո հնարավորություն էր ունեցել ուրի կանգնելու և ամրապնդվելու: Ռուսա II-ի օրոք (մ.թ.ա. 685-645 թթ.), եթե Ուրարտուն կորցրել էր հսկողությունը Արարատյան դաշտին հյուսիսից հարող շրջանների վրա,³⁵ Երիտնի ցեղամիությունն սկսել էր ընդարձակվել՝ ընդորկելով նախկինում իրեն պատկանած հարավային տարածքները: Ուրարտուն ի զորու չեղ կանխելու Երիտնիի հետագա հզրացումն ու ընդարձակումը: Ըստ Ե.Գրեկյանի՝ հնագիտական տվյալների և ուշ ուրարտական պատկերագրության որոշ օրինակների իմանա վրա կարելի է ենթադրել, որ անգամ Ուրարտական թագավորության անկման գործում իրենց դերակատառումն են ունեցել Երիտնիները («Քերևս իրենց՝ սկյութների հետ միասին»):³⁶ Կարծում ենք, թե Արարատյան դաշտի ուրարտական ամրացված կենտրոնները գրավելու գործում գլխավոր դերու լինելու էին Երիտնիները, ոչ թե հեծյալ սկյութները:

Երիտնիի աստիճանական ընդարձակման մասին են խոսում նախ ուրարտական արձանագրությունների տվյալները: Պարզվում է, որ Հրազդան քաղաքի շրջակայքը գրադերած Ջիեխունի երկիրն ավելի վաղ դրու էր եկել Ուրարտուի կազմից և ընդորկվել էր Վեդուրի-Երիտնի ցեղամիության մեջ:³⁷ Ըստ երևոյթին, Երիտնիի ընդարձակումն ուղեկցվում էր հյուսիսից հարավ ցեղային տեղաշարժերով, որոնցով էլ պետք է բացատրել հյուսիսային ծագումով տեղանունների գոյությունը Արարատյան դաշտին հարող տարածքներում և բուն դաշտում: Դրա վկայություններից է Աղվերան բնակա-

³² Հմմոտ. Նույնպես Երկմիասնական կառուցվածքը ունեցած Հայաստ-Ազի ցեղամիության հետ (տե՛ս և Ս. Պետրոսյան, *Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений, «Լրաբեր հասարակական զիտությունների», 1987, թիվ 3, էջ 77-78):*

³³ Խորենացի, Բ. Դ:

³⁴ Г. Մելիքանավուլ, *Урартские клинообразные надписи, М., 1960, N 155 C.*

³⁵ Հ. Արյուոնյան, *Բասինու (Ուրարտ), Еր., 1970, стр. 325.*

³⁶ Ե. Գրեկյան, *Վանի թագավորության անկման շուրջ, «Հայկազունիներ. առասպել և պատմություն», ԳԱԱ և ԵՊՀ միջազգային գիտաժողովի գեկուցումների դրույթներ, Եր., 2012, էջ 59:*

³⁷ Հ. Արյուոնյան, *Բասինու (Ուրարտ), стр. 433-435.*

վայրի անունը: *Աղվերաս*<*աղուեր-ամ. հմմտ. -ամ տեղանվանակերտ վերջածանցը Աղեամ, Դերշամ, Երեամ, Սեւամ և այլ տեղանուններում, իսկ *աղուեր<*ա-դուեր//*ա-լուեր (ա հավելվածական ձայնավորով) հիմքի համար հմմտ. Սևանա լճի հարավային ափին տեղորոշվող սեպագրային Lueruni (<*Luer-un-i) ցեղանուն-երկրանունը:³⁸ Այս տեսանկյունից ուշագրավ են նաև ներկայիս Նախիջևանի երկրամասի Վանաձոր տեղանունը (հմմտ. ներկայիս Կարսի նահանգի մոտ կեսը զբաղեցրած հիմ հայկական Վանանդ գավառի անունը), *Չարուր* գավառանունը (հմմտ. Շիրակի անվանադիր Չարայի անունը),³⁹ *Արփա/Արփանեալ* գետանունն ու տեղանունը (հմմտ. Աշոցք-Շիրակում Արփա լճանունը և Արփա գետանունը):⁴⁰ Այս տեսանկյունից պատահական չեն նաև, որ հիմ հայկական ավանդությունը խոսում է Գեղամ նահապետի՝ Գեղարքունիքից Արարատյան դաշտ վերադառնալու և Արմավիրում վախճանված լինելու մասին:⁴¹

Էթիունիի՝ դեպի հարավ ընդարձակված լինելու մասին է վկայում նաև հետևյալ փաստը: Ուստա Ա-ի օրոք Կիրանի երկրի դիմացի սրբավայրից Խալդիի կոտքը «Վերաբնակեցվել» էր Ուստավինիիի (Թոփրակ-կալե), որովհետև իշրուգույան թագավորի ավագ որդիմ՝ Չազան, մտել էր Մանա թագավորության կազմում գտնվող այդ երկիրը և զբաղեցրել «Աքայայի տեղը» (ըստ երևոյթին, ցեղապետ-արքայի զահը): Այդ երկիրը գտնվելու էր Ուրմիա լճից արևելք կամ հյուսիս-արևելք՝ հյուսիսից Մանայի հարեանությանը, իսկ Իշրիգուլու/Իշրուգու(հ)ում՝ հետագա Աշոցքում՝ ներկայիս Շիրակի նարգի հյուսիսում էր:⁴² Իրարից թագականաշափ հեռու գտնված ցեղային երկրներին առնչված այդ փոփոխությունը կարող էր տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե ծագումով իշրուգույցի թագավորը ներկայացներ ամբողջ Էթիունին (ինչպես ավելի վաղ հանհական ծագումով Դիուժինին էր) և լիներ սկյութների դաշնակիցը:

«Հնդիկ» արքայի կերպարը նախատիպ էր ունենալու մ.թ.ա. VIIդ. կեսերից մինչև մ.թ.ա. VIդ. կեսերը Էթիունիում իշխած թագավորների, որոնք ժամանակակիցներն են եղել Մարաստանի Կիաքսարես ու Աստյուազես թագավորների, Աքեմենյան աշխարհակալության հիմնադիր Կյուրոս Սեծի և Արմենիայի (Հարավարևմտյան Հայաստանի) թագավորներ «Արմեն»-ի⁴³ ու նրա որդի Տիգրան Երվանդյանի: «Հնդիկ»-ի թագավորությունն իր գոյությունը շարունակել է Աքեմենյան աշխարհակալության ստեղծումից հետո ևս: Ըստ Քսենովինի՝ «Հնդիկ»-ի պատվիրակները եղել են Լյոդիայի թագավոր Կրեստի մոտ և լրտեսել են հօգուտ Կյուրոսի:⁴⁴ Իսկ Կրեստը պարտություն էր կրել և Կյուրոսի կողմից գերեվարվել մ.թ.ա. 546 թվականին:

Թե եթե էր անկախությունից զրկվել հայկական այս թագավորությունը, դժվար է ասել: Միայն ենթադրել կարելի է, որ հետագայում այն ենթարկվել էր հզորացած պարսիկներին, իսկ Դարեն I-ի օրոք ընդգրկվել Աքեմենյան տերության XVIII սատրապետության մեջ՝ կազմելով սրա հիմնական մասը: *Արմենիա* անունը տարածվել էր նաև նրա վրա այն պարզ պատճառով, որ Արմինա/Արմենիայի նման նրա բնակչությունը

³⁸ *Ս. Պետրոսյան*, *Մերձականական ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ.թ.ա. VI-Vդդ)*, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, թիվ 1, էջ 190, ծան. 21:

³⁹ *Գր. Կառանյան*, *Историко - лингвистические работы к началальной истории армян*, Еր., 1956, симр. 121-122.

⁴⁰ *Ս. Պետրոսյան*, *Դասերը և եռադասության դրսնորումները Հին Հայաստանում*, էջ 301-302:

⁴¹ Խորենացի, Ա, ԺԲ:

⁴² *Հ. Արյուտոնյան*, *Տոպոնիմիկա Սրբություն*, Եր., 1985, симр. 94.

⁴³ Քսենովինի «Կյուրոպեդիա»-ում Արմեն (Արմենիոս), այսինքն՝ «Հայ», կոչված Հայոց թագավորը Երվանդ Սակավակյացը չէ, այլ պատմիչներին Հայկակ կամ Սյուս Հայկ անունով հայտնի Հայոց նահապետը (*Ս. Պետրոսյան*, *Դասերը և եռադասության դրսնորումները հին Հայաստանում*, էջ 348-354):

⁴⁴ *Խեն*, Сур., VI, II, 9; VI, II, 13.

Աս կազմում էր միասնական հայության՝ հայախոս Էքտոսի բաղկացուցիչ մասը: Բացառված չէ, որ քենոփոնյան «Հնդիկ»-ի ժառանգործները եղել են Մեծ Հայքի բազավորներին ենթակա «Երկրորդական զահ»-ի տիրակալները:⁴⁵

КСЕНОФОНТСКОЕ “ЦАРСТВО ИНДОСА” И КЛИНОПИСНАЯ СТРАНА ЭТИУНИ

Резюме

С. Петросян

В “Киропедии” Ксенофонт сообщает, что халдайи - жители Армянского нагорья, иногда в качестве наемников служили у “Индийского царя”//”Իւծ, что как они, так и арmenы имели постоянные сношения с “индийцами”. Это и побудило Кира просить халдайев и арmenов дать ему проводников для сопровождения мидийско-персидского посла, который должен отправиться в страну “индийцев”. Эти обстоятельства говорят о том, что ”Իւծ и “индийцы” имели отношения с халдайами и арmenами. Значит, они не были жителями Индии (в Южной Азии), а жили на Армянском нагорье. По нашему мнению, эти “индийцы” населяли северо-восточную часть Армянского нагорья, которая находилась между страной халдайев (с запада), арmenов (с юго-запада) и мидийцев (с юго-востока). Это- территория “страны Этюни” урартских клинописных надписей, которая позже стала XVIII саспейрой Ахеменидской державы. Здесь вместе с алародиями и матиенами жили саспейры (Σάσπειρες, Σάσπειροι). Последний этоним состоит из компонентов *sas-* (<и.-е. *sas- “зерно, уражай”) и *pēir-* (<и.-е. *per- “рождать, производить” или *puer- “сын”). Из того же хозяйственно-культурного круга и из того же региона происходит и этоним ”Իւծ. Этот этоним, вероятно, следует считать возникшим от имени *ընդ/*ընդիկ или *հ(ը)նդիկ/*հ(ը)նդիկ: Ср. арм. տնդ “зерно” и суффиксы -ի, -իկ. Приведенные этонимы семасиологически идентичны и обозначают общность оседлых земледельцев, которые занимались культивацией зерновых культур.

⁴⁵ Խորենացի, Բ, իսր, իսլ, ծաւ: